ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար /ծածկագիր՝ 61-3.3-8/

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-բարձրագույն կրթություն,քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

Գործառույթները՝

-մասնակցում է Արագածոտնի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերի վերահսկման աշխատանքներին.

- մասնակցում է մարզի սահմանանիշների և գեոդեզիական կետերի պահպանման վերահսկման աշխատանքներին
- իրականացնում է մարզի հողերի օգտագործման սխեմաները սահմանված կարգով կառավարության հաստատմանը ներկայացնելու աշխատանքները
- մասնակցում է մարզի հողային հաշվեկշիռի կազմման աշխատանքերին
- մասնակցում է մարզի տարածքում հողաշինարարության, հողօգտագործման և հողի պահպանման նկատմամբ, կանխման, կասեցման և ապօրինի հողօգտագործման վերահսկման աշխատանքների իրականացմանը
- մասնակցում է համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման գործընթացի նկատմամբ վերահսկման աշխատանքներին
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2019թ. հուլիսի 4-ը ներառյալ:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- դիմում /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.
- անձնագիր
- դիպլոմ
- արական սեռի անձինք նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին
-աշխատանքային գրքույկ կամ աշխատանքային ստաժի վերաբերյալ անհատական հաշվի քաղվածք

- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

Աշխատավարձը կազմում է 129.634 /մեկ հարյուր քսանինը հազար վեց հարյուր երեսունչորս/ դրամ:

Տվյալ որոշակի ժամկետով թափուր պաշտոնի վերացման ժամկետը՝ հիմքի վերացումը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ փաստաթղթերը ուղարկել անձնակազմի կառավարման բաժնի էլեկտրոնային հասցեով՝ aragatsotn.andznakazm@mta.gov.am

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ,ժամը 10:00-ից մինչև 13:00-ն,բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 4:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 0232 /3-53-83/: